Պահանջվող փաստաթղթեր

ՀԳՊԱ ասպիրանտուրա ընդունվելու համար դիմորդը սահմանված ժամկետում պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.

1. դիմում՝ ՀԳՊԱ ռեկտորի անունով՝ դիմորդից կամ նրա լիազորած անձից,
2. բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի* ու դրանց հավելվածների պատճենները,
3. «Օտար լեզու» առարկայի ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանք,
4. ընտրված մասնագիտությամբ հրապարակված առնվազն 1 գիտական հոդվածի պատճենը կամ գիտական ռեֆերատ**,**
5. ինքնակենսագրություն և 3 լուսանկար (3x4 չափսի),
6. **կադրերի հաշվառման անձնական թերթիկ,**
7. անձնագրի և սոցիալական քարտի պատճենները,
8. քաղվածք՝ աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):

*Դիմորդի կողմից ներկայացված դիպլոմի իսկությունը պարզելու նպատակով ՀԳՊԱ ընդունող հանձնաժողովն իրավասու է ըստ անհրաժեշտության դիմորդից պահանջելու **«Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնից»** տեղեկանք՝ դիպլոմի իսկության մասին:

Արտասահմանյան բուհի դիպլոմ ներկայացնելու դեպքում դիմորդը դիպլոմի հետ պետք է ներկայացնի նաև **Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնից** տեղեկանք՝ դիպլոմի համարժեքության մասին: